

Բլադետ Թրոմսոն և Ստենսասը ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromso and Stensaas v. Norway), 1999, Appl. No. 21980/93, Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Թեման՝ Զրպարտություն

Ենթաթեման՝ պաշտպանության միջոցներ

Թեսքը՝ արտահայտվելու ազատության կարևորությունը, անհրաժեշտությունը Սանկցիան՝ ֆինանսական

Վճիռը՝ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Նորվեգիա

Գործի փաստական հանգամանքները.

Առաջին դիմումատուն օրաթերթ հրատարակող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն էր, երկրորդ դիմումատուն՝ օրաթերթի գլխավոր խմբագիրը: Օրաթերթը մի շարք հոդվածներ էր տպագրել՝ փոկերի որս իրականացնող նավի վրա նշանակված Տեսուչի եզրակացությունների հիման վրա: Տեսուչի զեկույցով, մասնավորապես, նշվում էր, որ փոկերի որս իրականացնող անձինք գործել են անօրինական կերպով, չենթարկվելով համապատասխան խիստ կանոնակարգերին: Այս զեկույցը ժամանակավորապես հանվել է հրապարակումից՝ Ձկնորսության նախարարության կողմից: Դիմումատուների դեմ զրպարտության գործ է հարուցվել նավի անձնակազմի անդամների կողմից, որից հետո հրապարակված որոշ հայտարարություններ ճանաչվել են որպես զրպարտող և հետևաբար՝ առոչինչ ու անվավեր: Դիմումատուները վճռով պարտավորեցվել են վճարել փոխհատուցում հայցվորներին:

Եվրոպական դատարանի վերլուծությունը և եզրակացությունը.

Դատարանը գտավ, որ տեղի է ունեցել միջամտություն արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ պետական մարմնի կողմից, այն հետապնդում էր իրավաչափ նպատակ, այն է՝ այլոց հեղինակության կամ իրավունքների պաշտպանության նպատակ: Կոնվենցիայի 10(2)-րդ հոդվածի իմաստով՝ «անհրաժեշտությունը» պահանջում է, որ պետությունը հիմնավորի, որ գանգատի առարկա միջամտությունը բխում է «ճնշող հասարակական կարիքից», որ այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին», եւ որ իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով ներկայացված պատճառները «վերաբերելի են եւ բավարար»: Պետությունն ունի «հայեցողության լուսանցք» որոշելու, թե արդյոք կարիքը առկա է, և ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն:

Արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը.

Մալումը կենսական դեր է խաղում ժողովրդավարական հասարակությունում, այն պարտականություն ունի տեղեկատվություն տարածել հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ, իսկ հասարակությունն իրավունք ունի ստանալու այն: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում անվնաս, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցության և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն: Պետության «հայեցողության լուսանցքը» սահմանափակված է ժողովրդավարության շահով՝ մամուլի «հանրային հսկիչի» դեր կատարելու և հանրային լուրջ մտահոգության առարկա հանդիսացող հարցերի շուրջ տեղեկատվություն տարածելու հնարավորությունն ապահովելու նպատակով:

Վիճարկվող հայտարարություններով փոկերի որս իրականացնող անձինք մեղադրվում էին դաժանության և քրեաիրավական արարքների կատարման մեջ: Ներպետական դատարանների որոշումները վերաբերելի էին՝ սահմանափակման իրավաչափ նպատակ համարվող անձնակազմի անդամների իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Դրանց «բավարար» լինելը որոշելու համար հողվածները պետք է դիտվեն այդ ժամանակ Նորվեգիայում փոկերի որսի հետ կապված ընթացող քննարկումների և թերթի կողմից փոկերի որսի ընդհանուր լուսաբանումների լույսի ներքո: Փաստերի առնչությամբ, թերթը հավասարակշռված մոտեցում է ցուցաբերել, որը հրապարակել է հարցին առնչվող տարբեր կողմերի տեսակետները: Բացի այդ.

«Անհրաժեշտ է իրականացնել լուրջ հսկողություն, երբ պետական իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները կամ կիրառված սանկցիաները կարող են հետ պահել մամուլին իրավաչափ հասարակական մտահոգության առարկա հանդիսացող հարցերի շուրջ բանավեճի մասնակցությունից» (պարագրաֆ 64):

Կոնվենցիայի 10(2) հոլվածը պարտականություններ և պատասխանատվություն է նախատեսում արտահայտվելու ազատության իրավունք իրականացնողների համար, որը կիրառելի է մամուլի նկատմամբ: Դրանք կարևորություն են ձեռք բերում, երբ մասնավոր անձանց հեղինակության նկատմամբ կատարվում են ոտնձգություններ: Բացի այդ,

Կոնվենցիայի 6(2)-րդ հոդվածը փոկերի որս իրականացնող անձանց օժտել է՝ որևէ քրեական հանցագործության մեջ անմեղ համարվելու իրավունքով, քանի դեռ չի ապացուցվել նրանց մեղավորությունը:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները: Վիճարկվող արտահայտությունները հանդիսացել են փաստերի շարադրանք և ոչ՝ գնահատողական դատողություններ, որոնք չէին ստուգվել անկախ ուսումնասիրությամբ: Հետևաբար պետք է ուսումնասիրվի, թե արդյոք եղել են որևէ հատուկ հիմքեր, որոնք թերթին կարող են ազատել իր սովորական պարտականություններից՝ ստուգելու փաստերի վերաբերյալ հայտարարությունները, որոնք զրպարտում են մասնավոր անձանց:

Անհրաժեշտությունը և պաշտպանության միջոցները

Փաստերի առնչությամբ կարևորվել են հետևյալ հանգամանքները. 1. Որոշ հայտարարություններ ճանաչվել են որպես զրպարտչական ոչ թե այն պատճառով, որ նրանցով դաժանության վերաբերյալ պնդում էր արվում, այլ որովհետև որոշակի տեսակի փոկերի որսն անօրինական է: 2. Դաժանության վերաբերյալ այլ պնդումները, որոնք տեղ էին գտել այլ հայտարարություններում ավելի լուրջ էին, սակայն արտահայտված էին այնպիսի եղանակով, որ կարող էին ընթերցողների կողմից ընկալվել որպես որոշակի աստիճանի չափազանցությամբ ներկայացված, 3. Անձնակազմի անդամների անունները, որոնց վրա հետազոտություն իրականացնողը չէր տարածել համապատասխան պնդումները տպագրվել էին, բայց ոչ նրանց անունները, ովքեր մեղադրվում էին, այսպիսով, հայտարարությունները ուղղված չէին կոնկրետ անձնակազմի անդամներին /առանձին անդամների հեղինակությանը պատճառված վնասը նվազեցվել է/ 4. Քանի որ զեկույցը գրվել է պարոն Լ.-ի՝ որպես տեսուչ պաշտոնապես գործելու ժամանակահատվածում, իսկ տեսուչը նշանակվել է կառավարության կողմից, թերթը կարող էր հիմնվել վերջինիս զեկույցի վրա.(Դատարանի կարծիքով մամուլը սովորաբար պետք է իրավունք ունենա հիմնվելու պաշտոնական զեկույցների բովանդակության վրա՝ առանց անկախ հետազոտություն իրականացնելու պարտավորություն կրելու, երբ աջակցում է հանրային շահերին վերաբերող հարցերի վերաբերյալ հասարակական քննարկումներին: Այլապես, մամուլի՝ «հանրային հսկիչի» դերը կարող է արժեզրկվել: 6. Կառավարության՝ զեկույցի վերաբերյալ հայտարարություններում որևէ բան չկար, որով կասկածի տակ դրվեր դրա իսկությունը. Այսպիսով, թերթը կարող էր ողջամտորեն հիմնվել այդ զեկույցի վրա՝ առանց իր սեփական ուսումնասիրությունը կատարելու:

Անձնակազմի անդամների՝ իրենց հեղինակությունը պաշտպանելու շահը չէր կարող գերակշռել հասարակության կենսական շահը՝ տեղական, ազգային և միջազգային շահերին վերաբերող տեղեկացված հանրային քննարկում ապահովելու վերաբերյալ: Պետության կողմից ներկայացված պատճառները բավարար չէին հիմնավորելու համար, որ գանգատի առարկա միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում:

<http://ela.am/hy/2011/09/24/bladet-tromso-and-stensaas-v-norway-%D5%A2%D5%AC%D5%A1%D5%A4%D5%A5%D5%BF-%D5%A9%D6%80%D5%B8%D5%B4%D5%BD%D5%B8-%D6%87-%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A1%D5%BD-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%A4%D5%A5%D5%B4/>